ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՅՐԱՆՈՒՇ ՊՕՂՈՍԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Սփիւռքագիտութեան ամբիոնի ասպիրանտ

ԽԱՌՆԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔՈՒՄ

Հայաստանի եւ դեռեւս չճանաչուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւններից դուրս բնակուող հայը ամենօրեայ պայքար է մղում հայ մնալու եւ ձուլման վտանգներին դիմակայելու համար: Քանի որ խառնամուսնութիւնները ներկայ աշխարհում հանդիսանում են ուծացմանը նպաստող ամենավտանգաւոր գործօններից մէկը, սոյն յօդուածում անդրադառնում ենք խառնամուսնութիւնների հիմնախնդրին, որի ուսումնասիրութիւնը, լուսաբանումը եւ ներկայացումը, մեր կարծիքով, արդիական նշանակութիւն ունի:

Սփիւռքի հայ համայնքների անվտանգութիւնն ունի երկու բաղադրիչ՝ ֆիզիքական եւ հոգեւոր: Ֆիզիքական բաղադրիչը յանգում է հայ համայնքների գոյութեանը, իսկ հոգեւորը՝ նրանց ազգային նկարագրի պահպանմանը: Սփիւռքի հայ համայնքների առջեւ ֆիզիքական եւ հոգեւոր անվտանգութեան առումով կանգնած են հիմնականում չորս մարտահրաւէրներ: Դրանք են՝ ինքնութեան բաղադրիչների կորուստը, խառնամուսնութիւնները, գոյապահպանութեան սպառնալիքները եւ արտագաղթը[1]:

Սփիւռք ունեցող ազգերի եւ սփիւռքեան համայնքների հիմնախնդիրների շարքում աւանդական տեղ են զբաղեցնում ինքնութեան պահպանման հարցերը[2]:

Ինքնութեան բաղադրիչների կորուստը՝ լեզուի, մշակոյթի, պատմական յիշողութեան եւ այլ բաղադրիչների աստիճանական մարումն է այն հայութեան շրջանում, որոնք բնակւում են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնների սահմաններից դուրս: Բնակուելով օտար միջավայրում՝ նրանք, կամայ թէ ակամայ, ինտեգրւում են ընդունող հասարակութեան մէջ, կրում են այդ հասարակութեան սոցիալ-տնտեսական եւ մշակութային ազդեցութիւնը:

Խառնամուսնութիւնները, մի կողմից՝ իրենց բնակութեան երկրների հասարակութիւններում սփիւռքահայերի ինտեգրուածութեան ցուցիչ լինելով, միւս կողմից՝ նպաստում են հայ ինքնութեան խեղաթիւրման խորացմանը: Խառնամուսնական ընտանիքներում նոր սերունդը աւելի մեծ չափով եւ աւելի անմիջականօրէն է ենթարկւում օտար սոցիալ-մշակութային ազդեցութեանը: Եթէ հայկական ընտանիքներում նոր սերունդը միայն արտաքինից, այն է՝ հասարակական միջավայրի կողմից է են-

---

[1] Տե՛ս **Հովեան Վ.**, Հայկական սփիւռքի անվտանգութեան մարտահրաւէրները http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12736

[2] Տե՛ս **Մանուկեան Ս.**, Ինքնութեան պահպանման խնդիրները Սփիւռքում. Սոցիալ-հոգեբանական տեսանկիւն, http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=4843

թարկում օտար սոցիալ-մշակութային ազդեցութեանը, ապա խառնամուսնական ընտանիքներում արդէն ներսից՝ ընտանեկան միջավայրից է իր վրայ կրում օտար մշակութային արժէքների ազդեցութիւնը[3]։

Ակնյայտ է, որ եթէ վերոնշեալ գործօններից առաջին երկուսը՝ ինքնութեան բաղադրիչների կորուստը եւ խառնամուսնութիւնները, առնչւում են հոգեւոր անվտանգութեանը, ապա վերջին երկուսը՝ գոյապահպանութեան հարցն ու արտագաղթը, վերաբերում են ֆիզիքականին[4]։

Հայերի ընդհանուր քանակը ամբողջ աշխարհում կազմում է 10-12 միլիոն, որից միայն 3 միլիոնն է ապրում Հայաստանի Հանրապետութիւնում՝ ըստ պաշտօնական վիճակագրութեան[5]։ Հայութեան մեծագոյն մասը այսօր ապրում է Հայաստանի Հանրապետութեան սահմաններից դուրս։

20-րդ դարի սկզբում Հայաստանից դուրս ապրող հայերի հաւաքական անուանումը եւրոպական լեզուներում դարձաւ «diaspora» տերմինը /հայկական անալոգը հանդիսանում է հայերէն «սփիւռք» տերմինը/[6]։ Բացի «սփիւռք» տերմինից, մեզանում շրջանառութեան մէջ է դրուել նաեւ «ցրոնք» տերմինը[7]։

Բոլոր պետութիւններում, բացի պետականակերտ էթնոսից /ազգից/, որպէս կանոն, կան նաեւ էթնիկ փոքրամասնութիւններ[8]։ Էթնիկ փոքրամասնութիւնները հանդիսանում են այդ պետութիւնների լիիրաւ քաղաքացիները եւ ունեն նոյն իրաւունքները եւ պարտականութիւնները՝ ինչ պետականակերտ էթնոսի ներկայացուցիչները։ Էթնիկ վերաբնակեցումները հանդիսանում են նոր սփիւռքերի ձեւաւորման հիմնական աղբիւրը[9]։

Հայկական սփիւռքը միաձոյլ կառոյց չէ։ Այն նշանաւորւում է սեփական պատմութեամբ, զարգացման ուրոյն ձեւով։ Ընդ որում իւրաքանչիւր համայնք ունի իր պատմութիւնը։

Հայկական սփիւռքն այսօր ունի բազմաթիւ խնդիրներ, որոնցից մեծագոյնը՝ ձուլման վտանգն է։ Իսկ ձուլման առաջին պայմանը հանդիսանում է խառնամուսնութիւնը, երբ հայ երիտասարդները ամուսնանում են օտարազգիների հետ։

Ընտանիքն ազգի գոյութեան հիմնասիւնն է։ Այն ապահովում է ազգի ժառանգական յաջորդականութիւնը, իրականացնելով իր ներսում աճող նոր սերնդի ազգային հիմնական դաստիարակութիւնը։ Բնականաբար, ընտանիքի ապազգայնացումը, որն իրականացւում է արիունախառնութեան եւ օտար բարքերի ընդօրինակման ձեւով, կործանարար է ազգի գոյութեան համար։

Խառնամուսնական ընտանիքում որքան էլ ամուսինները լինեն լայնախոհ կամ փոխադարձ սիրով կապուած, միեւնոյն է, նրանց հոգեկերտուածքի, էութեան բնական

---

[3] Տե՛ս **Հովեան Վ.**, Հայկական սփիւռքի անվտանգութեան մարտահրաւէրները։ http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12736 :

[4] Տե՛ս նոյն տեղում։

[5] Տե՛ս **Ռիտտեր Լորանս** Հայկական ինքնութիւնը Սփիւռքում.արդիականութեան եւ հայապահպանման միջեւ։ http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenian-identity-in-the-diaspora-between-modernity-and-preservation-armenian :

[6] Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.,** Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван 2009, с7.

[7] Տե՛ս **Եղիազարեան Ա.,** Հայ սփիւռքի պատմութեան պարբերացումը, էջ 34։ http://www.armin.am/images/menus/1929/Arman_eghiazaryan.pdf :

[8] Տե՛ս **Մանուկեան Ս.,** Ազգամիջեան յարաբերութիւններն Անդրկովկասում, 21-րդ դար, 1 (77), Երեւան 2018, էջ 4։

[9] Տե՛ս **Сандул Я.В.,** Попытки типологизации диаспор в научной литературе. http://portalus.ru/modules/psychology/rus_readme.php?subaction=showfull&id=1266959616&archive=&start_from=&ucat= :

տարբերութիւնն ունենալու է իր դրսեւորումները։ Ամուսիններից մէկը զիջելու է իր ազգային ինքնութիւնը՝ ընտանիքը չքայքայելու կամ այլ պատճառներով։ Իսկ նրանց երեխաները երկուութեան մէջ են ապրելու, նրանց ներսում երկու տարբեր մարդկային տեսակների հոգեբանական պայքար է ընթանալու։

Դարեր շարունակ Հայոց եկեղեցին, արգելել է լուսաւորչական հայերի ամուսնութիւնն այլադաւանների հետ։ Փաստօրէն, եկեղեցին, հասկանալով եւ խորութեամբ ըմբռնելով այլադաւանների հետ ամուսնութեան վնասակարութիւնը հայ ժողովրդի համար՝ անուղակի կերպով տաբու է դրել խառնամուսնութիւնների վրայ։

Այսօր խառնամուսնութիւնները դարձել են Հայկական սփիւռքի առջեւ ծառացած համար մէկ խնդիրներից մէկը։

Արդէն անհերքելի իրողութիւն է, որ սփիւռքեան իրականութեան մէջ գնալով պակասում են զուտ հայկական ընտանիքները։ Լատինական Ամերիկայի երկրներում խառնամուսնութիւնները կազմում են աւելի քան 80%[10]։ Ամերիկայում, մասնաւորապէս Հիւսիսային Ամերիկայում եւ Կանադայում, խառնամուսնութիւնները մօտաւորապէս 60% են կազմում[11]։

Հայկական Սփիւռքը մենք, որպէս կանոն, բաժանում ենք դասական եւ նոր սփիւռքների։ Այդ բաժանումը յատկապէս կիրառելի է խառնամուսնութիւնների պարագայում[12]։

Պէտք է նշել, որ դասական կամ հին սփիւռքը, որն իրենից մեծ մասամբ ներկայացնում է Ցեղասպանութիւնը վերապրածների չորրորդ կամ հինգերորդ սերունդը, հիմնականում խառնամուսնութեան ճանապարհով ազգային արժէքների կորստեան վտանգին ենթարկւում է շուրջ 100 տարի, որն էլ սփիւռքահայութեան թուաքանակի վրայ թողել է իր զգալի ազդեցութիւնը։ Ըստ որում, դասական Սփիւռքը կարողացել է հիմնականում պայքարել ազգային արժէքների պահպանութեան, ազգային կառոյցների ստեղծման համար՝ պահպանելով հայկականութիւնը, մշակոյթը, աւանդոյթները։ Սակայն յատկապէս Լատինական Ամերիկայի երկրներում, ԱՄՆ-ում, Աւստրալիայում աւելանում են խառնամուսնութիւնները[13]։

Խառնամուսնական ընտանիքներում ազգային ինքնութեան որակների հետ կապուած մեծ դժուարութիւններ են առաջանում. լեզու, աւանդոյթներ, կրօն, ներ-ընտանեկան յարաբերութիւններ, մասնակցութիւն ներ-համայնքային կեանքին, հայրենիքի հետ կապին եւ այլն։

Սփիւռքն իր գոյութեան առաջին օրերից նուիրուել է հայապահպանութեան, նոր սերնդի ազգային նկարագրի ձեւաւորման, ինքնութեան, մայրենի լեզուի, հայկական աւանդոյթների, սովորոյթների, մշակոյթի, հաւատքի, հոգեւոր արժէքների պահպանման ու փոխանցման շարունակական ապահովման աշխատանքներին[14]։ Այն այստեղ հասցուած է ինստիտուցիոնալ ձեւաւորման եւ կարգաւորման բարձր մակարդակի[15]։

Տարիներ շարունակ հայապահպանութեան ազգանուէր գործը իրականացրել եւ

---

[10] Տե՛ս Հայ ինքնութեան որակների պահպանումը խառնամուսնութիւններում, Գիտագործնական համաժողով, **Զեկուցումների ժողովածու,** Երեւան 2010, էջ 9։

[11] Տե՛ս նոյն տեղում։

[12] Տե՛ս նոյն տեղում, էջ 10։

[13] Տե՛ս նոյն տեղում։

[14] Տե՛ս **Յակոբեան Հ.,** Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացում. Պետական քաղաքականութիւնը (2008 - 2016թթ.), Հայագիտութեան հարցեր, Հանդէս 2 (11), Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն 2017, էջ 16։

[15] Տե՛ս **Վարտիկեան Ա., Ռ.,** Հայկական յետցեղասպանական սփիւռքի առանձնայատկութիւնները, http://ysu.am/files/haykakan-hetceghaspanakan-spyurqi-arandznahatkutyunnery.pdf , էջ 111։

իրականացնում են.

- *Հայոց եկեղեցին*
- *Հայկական աւանդական կուսակցութիւնները*
- *Սփիւռքեան կառոյցները։*

Այստեղ կարեւոր են ոչ միայն տեղական համայնքային ազգային, ազգապահպան կառոյցներն ու միաւորները, այլ նաեւ մի շարք անդր-սահմանային, համահայկական ինստիտուտներ[16]։

Հայութեանը համախմբելու ու աջակցելու, նրանց մէջ վաղուայ օրուայ նկատմամբ յոյսն ու հաւատը անմար պահելու, նպատակասլաց գործունէութեան մղելու եւ վերջապէս նրանց մէջ հայկականութիւնը, ազգային արժէքները պահպանելու գործում վճռորոշ դերը ամէնից առաջ պատկանում է հայկական եկեղեցուն, որը սփիւռքում ծաւալած իր համապարփակ հոգեւոր եւ մշակութային եւ կրթա-լուսաւորչական գործունէութեամբ, իրաւամբ, կատարել է պետութեան դեր եւ իրականացրել համապատասխան գործառոյթներ[17]։ Եկեղեցին իր ազգապահպան գործունէութեամբ կարողացել է հետ պահել երիտասարդութեանը խառնամուսնութիւններից, որոնք, ինչպէս եւ օտար դպրոցներ յաճախելը, հայութեանը դէպի ուծացում տանող ամենավտանգաւոր գործօններն են[18]։ Այս առումով Հայոց եկեղեցու դերը կարելի է անուանել բացառիկ։

Հայապահպանութեանն ուղղուած մեծ գործունէութիւն են ծաւալում նաեւ Հայկական աւանդական կուսակցութիւնները եւ սփիւռքեան կառոյցները։

Վերոբերեալ կառոյցների ամենօրեայ տքնաջան աշխատանքի արդիւնքում սփիւռքահայութեան մեծամասնութեան համար խորթ չէ մասնակցութիւնը ներհամայնքային կեանքին։ Նրանք իրականացնում են բազմաթիւ եւ բազմապիսի համահայկական ծրագրեր, փորձում են սփիւռքահայ երիտասարդներին հաղորդակից դարձնել այդ ծրագրերին։

Յանուն ճշմարտութեան պէտք է արձանագրել, որ մեր հայրենակիցներից ոչ բոլորն են գնում եկեղեցի, կամ, ոչ բոլորն են ներգրաւուած այդ կառոյցների աշխատանքներին։ Սակայն, նրանց թիւը, ի ուրախութիւն մեզ, համեմատաբար փոքր է։

Հայ ինքնութիւնը սփիւռքում տասնամեակներ շարունակ հիմնուած է եղել լեզուի, կրօնի, ազգային մշակոյթի, Յեղասպանութեան յիշողութեան, հայկական աւանդական ընտանիքի պահպանման գաղափարների վրայ, որոնք էլ հանդէս են եկել որպէս ինքնագիտակցութեան բաղադրիչներ[19]։

Խառնամուսնական ընտանիքներում բախւում են մշակոյթները, աւանդոյթները, լեզուները, երբեմն նաեւ հաւատները։ Այդպիսի ընտանիքներում ծնուած երեխաների համար առաջանում են բազմաթիւ դժուարութիւններ։ Երեխան իր ինքնահաստատման եւ ինքնաճանաչողութեան ամբողջ ընթացքում գտնւում է երկընտրանքի մէջ։ Այստեղ առաջանում է նաեւ օտար միջավայրում ապրելու խնդիրը։

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետութիւնում նոյնպէս առկայ է խառնամուսնութիւնների խնդիրը։ Հայաստանում խառնամուսնութիւններից ծնուած երեխաները, հիմնականում, յաճախում են հայկական դպրոցներ, մեծանում են հայկական

---

[16] Տե՛ս նոյն տեղում, էջ 114:

[17] Տե՛ս **Յարութիւնեան Ն.**, Սիրիայի եւ Լիբանանի հայկական դպրոցները, Երեւան 2002, էջ 19:

[18] Տե՛ս նոյն տեղում:

[19] Տե՛ս **Հովհան Վ.**, Հայ ինքնութիւնը Սփիւռքում 21-րդ դարում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=17939 , 18.12.2018:

միջավայրում եւ նրանց հայկական ինքնութեան պահպանման խնդիրը առանձնակի սրութիւն չի ներկայացնում։

Խառնամուսնութիւնները ներկայ գլոբալիզացման գործընթացներում առաւել լայն ընդգրկում են ստանում։ Հայ ժողովուրդը, որի 2/3-ը բնակւում է հայրենիքից դուրս, այդ վտանգին ենթարկւում է առաւել մեծ չափերով, կարելի է ասել ամէն օր։ Երիտասարդ մարդը, որին ամէնից առաջ հետաքրքրում է կրթութիւնը, մարդկային կամ քաղաքական առաջընթացը, առաւել շատ է կտրւում հայկական կեանքից, միջավայրը, որտեղ հասունանում է, դառնում է աշխարհաքաղաքացի եւ, կապուելով այլ ազգերի ներկայացուցիչների հետ, խառնւում են երկու մշակոյթ, երկու սովորոյթ, երկու աւանդոյթ, երկու կենցաղ, երկու լեզու, երբեմն նաեւ երկու կրօն։

Ինչպէս վերը նշեցինք, Հայկական սփիւռքը շատ բազմազան է եւ խայտաբղէտ։ Խայտաբղէտ է նաեւ խառնամուսնութիւնների ցուցանիշը քրիստոնեայ եւ մահմեդական աշխարհներում։

Կարեւոր է նշել, որ խառնամուսնութիւնները սփիւռքահայերի մէջ, առաւել յաճախ, դիտարկելի են եւրոպական, քան մերձաւոր արեւելեան երկրներում, ինչն, անշուշտ, պայմանաւորուած է եւ կրօնական միջավայրի գործօնով։ Եթէ քրիստոնէական միջավայրում այլազգու հետ ամուսնութիւնը չէր քաջալերում ընտանիքը (աւագ սերունդը), ապա, մահմեդական միջավայրում, խառնամուսնութիւնը այլակրօնի հետ չէր քաջալերում նաեւ հայ համայնքն ու եկեղեցին, որի ողջ ներուժն ուղղուած է ոչ միայն մշակութային, այլեւ հոգեւոր կրօնական ինքնուրոյնութեան պահպանմանը։

Քանի որ հայերը ապրում են աշխարհի ութսունից աւելի երկրներում, այս աշխատանքում կանդրադառնանք այն երկրներին, որոնցում հայերի թուաքանակը համեմատաբար մեծ է։

Ամերիկայի եւ Եւրոպայի հայութիւնը հիմնականում չունի գոյապահպանութեան եւ արտագաղթի խնդիրներ։ ԱՄՆ-ը, Կանադան, Արեւմտեան եւ Արեւելեան Եւրոպայի երկրները հիմնականում աչքի են ընկնում ներքաղաքական կայունութեամբ։ Այնտեղ սուր չեն նաեւ էթնիկ եւ կրօնական հակասութիւնները, որոնք ներքին եւ արտաքին տեւական ու յաճախակի ցնցումների աղբիւր կարող են հանդիսանալ։ Ինչ վերաբերում է արտագաղթին, ապա ներքին կայունութիւնն ու համեմատաբար բարեկեցիկ սոցիալ-տնտեսական պայմանները ոչ միայն չեզոքացնում են նման մարտահրաւէրի հնարաւորութիւնը, այլեւ խթանում են սփիւռքի միւս հայ համայնքներից, ինչպէս նաեւ Հայաստանից հայերի ներհոսքը դէպի այդ երկրներ։ Արդիւնքում՝ այդ երկրների, յատկապէս ԱՄՆ-ի, Կանադայի, Արեւմտեան Եւրոպայի երկրների հայ համայնքները ոչ միայն չեն նոսրանում, այլեւ շարունակաբար համալրւում են նորեկ հայերով[20]։

Փոխարէնը այդ երկրներում սուր է դրուած ուծացման կամ ազգային ինքնութեան կորստի խնդիրը։ Ընդհանուր քրիստոնէական սոցիալ-քաղաքակրթական միջավայրը, տնտեսական եւ քաղաքական ազատութիւնները լայն հնարաւորութիւն են ընձեռում հայութեանը՝ արագ ինտեգրուել այդ երկրների հասարակութիւնների մէջ՝ իւրացնել նրանց լեզուն, սոցիալ-մշակութային արժէքները, բարձր դիրքերի հասնել քաղաքական, հասարակական, մշակութային, տնտեսական եւ այլ բնագաւառներում։

Սա, մի կողմից, նպաստում է հայ համայնքների եւ ընդհանուր հայութեան ներուժի մեծացմանը, սակայն միեւնոյն ժամանակ որոշակի սպառնալիք է ստեղծում ազգային ինքնութեան պահպանման համար։ Տեղական հասարակութիւններում արագ ինտեգրման արդիւնքում հայ համայնքների ներկայացուցիչները սերնդեսերունդ կորցնում են ազգային ինքնութեան այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ մայրենի

[20] Տե՛ս **Հովեան Վ.**, Հայկական սփիւռքի անվտանգութեան մարտահրաւէրները http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12736 :

լեզուն, հաղորդակցութիւնն ազգային պատմութեանն ու մշակոյթին, ազգային ինքնագիտակցութիւնը եւ այլն։ Տեղական հասարակութիւնների եւ հայ համայնքների փոխադարձ ներթափանցումը լայնօրէն խթանում են նաեւ խառնամուսնութիւնները, որոնք նոյնպէս լուրջ մարտահրաւէր են արտերկրում հայապահպանութեան համար[21]։

Այսօրուայ ԱՄՆ-ում, Կանադայում, Եւրոպայում ծնուած, այնտեղ մեծացած եւ բազմաթիւ մշակոյթներ կրող հայ երիտասարդը, որը երբեմն նաեւ մայրենի լեզուին էլ չի տիրապետում, շատ բնական է համարում ամուսնութիւնը այլ ազգի ներկայացուցչի հետ։

Ազգային նկարագրի պահպանման առումով յետ խորհրդային տարածքի հայ համայնքները նոյնպէս կանգնած են լուրջ մարտահրաւէրների առջեւ։ Ռուսաստանում, Վրաստանում եւ միւս երկրներում, որտեղ հաստատուած հայութեան համար այնքան էլ խորթ չեն տեղի սոցիալ-քաղաքակրթական միջավայրերը, որտեղ հայութիւնը խորապէս ինտեգրուած է տեղի հասարակութիւններում, որտեղ հայերն իրենց վրայ կրում են վերջինների սոցիալ-քաղաքակրթական ազդեցութիւնը, լուրջ վտանգի տակ է ազգային ինքնութեան բաղադրիչների՝ լեզուի, մշակոյթի, պատմական յիշողութեան պահպանումը։ Ակնյայտ է, որ խոր ինտեգրուածութեան պայմաններում յետ խորհրդային երկրներում մեծ տարածում ունեն նաեւ հայերի եւ այլազգիների միջեւ խառնամուսնութիւնները։

Հայերով բնակեցուած ամենամեծ գաղութը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնութիւնը։ Այստեղ խառնամուսնութիւնների թուաքանակը չափազանց մեծ է։ Դրան նպաստում են բազմաթիւ գործօններ։ Նախ՝ լեզուի իմացութիւնը։ Այնտեղ բնակուող հայերի մեծ մասը գերազանց տիրապետում է ռուսերէնին։ Այստեղ նպաստող հանգամանք է հանդիսանում նաեւ կրօնը։

Գրեթէ տրամագծօրէն հակառակ իրավիճակն է տիրում Միջին Արեւելքի հայ համայնքներում։ Այստեղ գերակշռող իսլամական միջավայրը, ինչպէս նաեւ քաղաքական եւ տնտեսական գործունէութեան սահմանափակումները որոշակիօրէն առանձնացնում են հայ համայնքներին տեղի հասարակութիւններից։ Այս հանգամանքը նպաստում է ինչպէս լեզուի եւ ազգային ինքնութեան միւս բաղադրիչների պահպանմանը, այնպէս էլ սահմանափակում է խառնամուսնութիւնների քանակը[22]։

Արեւելքի երկրները ունեն որոշակի իւրայատկութիւններ. նրանք հայախօս են։ Համայնքի ներսում իրար հետ շփւում են բացառապէս հայերէնով։ Ձգտում են իրենց երեխաներին անպայման տանել հայկական դպրոցներ։ Այդ է պատճառը, որ արեւելքի երկրներում խառնամուսնութիւններ տեղի չեն ունենում եւ հայապահպանութեան ցուցանիշը չափազանց բարձր է։ Ինչը չի կարելի ասել Եւրոպական երկրների, ԱՄՆ-ի, Կանադայի, յետ խորհրդային երկրների հայկական համայնքների մասին։

Խառնամուսնութիւնները հանդիսանում են այն թեմաներից մէկը, որոնց հանդէպ զգայուն են ոչ միայն Սփիւռք ունեցող, ազգապահպանութեան հարցերով մտահոգ հանրութիւնները, այլեւ՝ մարդիկ առհասարակ, նոյնիսկ՝ ազատականացուած արեւմտեան մշակոյթի ներկայացուցիչները։ Պատճառն այն է, որ մարդը բնականօրէն ոչ անտարբեր վերաբերմունք ունի սեփական արմատների ու դրանց պահպանման հանդէպ։

Յաճախ կարելի է հանդիպել, թէ ինչպէս են հայ ծնողները դիմադրում այլ ազգութեան ներկայացուցչի հետ ամուսնանալու՝ զաւակի ցանկութեանը։ Ամուսնացող անձի մօտ բախւում են մարդուն բնորոշ պահանջմունքները՝ արմատներ ունենալու,

[21] Տե՛ս նոյն տեղում։

[22] Տե՛ս նոյն տեղում։

տեսակը պահպանելու ձգտումը, ինչպէս նաեւ իր անձնական կեանքը տնօրինելու բնական պահանջմունքը։

Խառնամուսնութիւնները մշտապէս գտնում են թէժ քննարկումների եւ բանավէճերի կիզակէտում։ Մի մասը գտնում է, որ մարդը գործում է այնպէս, ինչպէս իրեն հարմար է։ Միւս մասն էլ խառնամուսնութիւնների մէջ մեծ սպառնալիք է տեսնում։

Խառնամուսնութիւնների վերաբերեալ հոգեբանական տեսակէտը առաւելապէս ուղղուած չէ պատասխանել այն հարցմանը, թէ խառնամուսնութիւնը լաւ է, թէ՝ վատ։

Վերոբերեալից պարզ է դառնում, որ խառնամուսնութիւնները ներկայ աշխարհում անխուսափելի են։ Հարկ է նշել, որ դրանք նաեւ բնականոն երեւոյթ են, որոնք մարդկութեանը ուղեկցել են իր պատմութեան գրեթէ ողջ ընթացքում։

Երբ խնդիրը դիտարկւում է անհատական հարթութեան վրայ, աւելորդ է ակնկալել, որ հայրենասիրական կոչով կարելի է ետ պահել այլազգիի հետ ամուսնանալու մտադրութիւնից. կան պարզ հոգեբանական եւ անգամ կենսաբանական մեխանիզմներ, որոնք պայմանաւորում են մարդկանց փոխադարձ գրաւչութիւնը, եւ չկայ ուղիղ համեմատական կապ ազգային եւ անձնային զգացմունքների միջեւ։

Ամուսնութիւններն էլ այլ ազգի ներկայացուցիչների հետ աւելի բնականոն են դառնում ներկայիս անդր-ազգային գործընթացների պարագայում։

Բուն հայկական Սփիւռքի ինքնութեան խնդիրներին անցնելուց առաջ փորձենք առհասարակ ճշգրտել ինքնութեան արդի իմաստաւորումը։ Այսօր ինքնութիւնը քննարկւում է ոչ թէ որպէս կայուն, անփոխոխ եւ մաքուր էութիւն, այլ բարդ, փոփոխական եւ փոփոխելի, բազմատարր նկարագիր։ Խմբային ինքնութիւնները եւս բազմաշերտ են, եւ էթնիկական ինքնութեան կողքին ներառում են նաեւ ազգային ինքնութեան, քաղաքացիական ինքնութեան շերտերը, ինչպէս նաեւ խօսում ենք սփիւռքեան, երկմշակութային, կոսմոպոլիտ, եւ այլ ինքնութեան ձեւերի մասին։

Էթնիկ պատկանելութիւնն, անշուշտ, խմբային ինքնութեան հիմնարար ձեւերից մէկն է, որն ապահովում է արմատներ ունենալու եւ այդ արմատներին կապուած լինելու ձգտումը, այդպիսով անհատին ապահովում հոգեբանական անվտանգութեան եւ կայունութեան զգացումով։ Այս իմաստով էթնոսն անհատի համար հանդիսանում է հոգեբանական հանրոյթ, իսկ էթնիկ ինքնութիւնը՝ դրա հիմնարար բնութագրիչներից մէկը։

Անկախ իրենց տեղակայումից՝ մարդիկ փորձում են նոյնականանալ սեփական էթնիկական խմբի հետ, եւ հակառակը՝ դրական էթնիկ ինքնութիւն ձեւաւորելու հարցում դժուարութիւնները առաջ են բերում խնդիրներ թէ՛ ներ-անձնային, թէ՛ ներխմբային ու միջ-խմբային յարաբերութիւններում։

Սակայն, ինչպէս նշեցինք, էթնիկութիւնը խմբային պատկանելութեան միակ ձեւը չէ, յատկապէս՝ այսօրուայ կեանքի պարագայում, որը ենթադրում է միաժամանակեայ ներգրաւում տարբեր խմբերում։

Ինքնութիւնների այսպիսի մեծ ընտրութեան պարագայում անգամ հիմնարար մեխանիզմներից մէկը, որով անհատներն ու խմբերն այսօր ձեւաւորում եւ պահպանում են իրենց ինքնութիւնը, շարունակում է մնալ ես-ուրիշ, մենք-նրանք յարաբերակցութիւնը։

Ընդ որում, այս հակադրումները միանշանակ չեն. դրանք կարող են փոփոխութեան ենթարկուել։ Այսպէս, մի համատեքստում որպէս մենք-նրանք տարբերակման հիմք կարող է լինել էթնիկութիւնը, մէկ ուրիշում՝ սոցիալական ինքնութեան այլ ձեւեր, ասենք՝ քաղաքացիական ինքնութիւնը, մասնագիտական ինքնութիւնը եւ այլն։

Սփիւռքահայ համայնքի ներկայացուցիչը կարող է ընդհանրութիւն ապրել իրեն արժէքմաստային դաշտով մօտ կանգնած, իր ամենօրեայ, շօշափելի սոցիալական իրականութեանը, իր քաղաքացիական ինքնութիւնը կիսող այլազգի հանրութեան հետ, եւ հակառակը՝ կոնկրետ շփման ժամանակ օտարութիւն ապրել հայրենակցի հանդէպ։ Սա չի նշանակում, որ նա հրաժարւում է իր ազգային արմատներից։

Այս ամէնը ցոյց է տալիս, որ միայն էթնիկ ինքնութիւնը մարդուն բաւարար չէ իր նմանների հետ շփում ունենալու համար։ Յայտնի է, որ անհատն իրեն աւելի վստահ եւ լիարժէք զգում է ծանօթ եւ կանխատեսելի միջավայրերում, եւ հակառակը՝ այն, ինչ անորոշ է եւ բաւարար ծանօթ չէ, առաջացնում է խուսափելու միտում։ Այս իմաստով սփիւռքահայ երիտասարդի (ինչպէս նաեւ նոր միգրացիոն հոսքերի արդիւնքում այլ երկրում հաստատուած հայի) մօտ հայրենիքը թէեւ դրականօրէն երանգաւորուած, սակայն անորոշութիւն պարունակող պատկեր է բնակութեան երկրի համեմատ։ Անհատն աւելի հեշտութեամբ իր կեանքի հիմնական իրադարձութիւնները կազմակերպում է այնտեղ, ուր անցնում է իր հիմնական սոցիալականացումը, ակուլտուրացիան, առօրեայ կեանքը։

Պէտք է նշել, նաեւ, որ առկայ են լինում որոշակի տարբերութիւններ գործող իրականութեան եւ պատկերացրած իրականութեան միջեւ։ Վերջինիս մակարդակում սփիւռքահայ անհատը, ասենք՝ ինչ-որ երիտասարդ, կապուած է, հայրենակիցների հետ, որոնք մի մասն են հայրենիքի դրական, իտէալականացուած պատկերացումների։ Իրական շփումը հայրենակցի հետ կարող է փորձութեան ենթարկել՝ ընդգծելով տարբերութիւնները եւ առաջ բերելով շփման խնդիրներ, անհարմարութիւն։ Այդ ամէնի պատճառով անձը կարող է խուսափել հետագայ շփումից։

Օտարութեան մէջ խառնամուսնութիւններն անխուսափելի են, եւ դրանք կասեցնել ի վիճակի չեն ոչ ամենազօրաւոր եկեղեցին, ոչ ամենաազգային կուսակցութիւնները, ոչ ազգային դպրոցը, ոչ մամուլը, ոչ ընտանիքը[23]։ Ինչպէս Լեւոն Շանթն է բնութագրել. «Խառնազգիի ընտանիքը Բաբելոն մըն է[24]»։ Եւ այսօր մեր Հայ Սփիւռքի գերակշիռ մասը փաստացի ապրում եւ գործում է այդ Բաբելոնի մէջ[25]։

Հայաստանի Հանրապետութեան եւ Սփիւռքեան բոլոր կառոյցների գերակայ խնդիրը այսօր հանդիսանում է հայապահպանութիւնը, որի գլխաւոր գրաւականը հանդիսանում է խառնամուսնութիւններից խուսափելը եւ հայկական ընտանիքների ստեղծումը։ Իրականացւում են համահայկական բազմաթիւ ծրագրեր ինչպէս Հայաստանում, այնպէս էլ սփիւռքեան տարբեր համայնքներում։ Առկայ է համացանցային մեծ հարթակ, որտեղ շփւում են մեր հայրենակիցների տարբեր շերտերի ներկայացուցիչները։

Այս ամենով հանդերձ, չպէտք է մոռանալ, որ մարդը իր խառնուածքով եւ էութեամբ շատ բարդ էակ է, իսկ իւրաքանչիւր մարդ առանձին վերցրած իւրատեսակ անձնաւորութիւն է[26] եւ ինքն է ընտրում իր ապագայ կնոջը կամ ամուսնուն։

Ամփոփելով կարելի է ասել, որ Հայկական Սփիւռքն այսօր ունի բազմաթիւ խընդիրներ, որոնցից մեծագոյնը՝ ձուլման վտանգն է։ Իսկ ձուլման առաջին պայմանը հանդիսանում է խառնամուսնութիւնը։ Խառնամուսնութիւնների տոկոսը չափազանց

---

[23] Տե՛ս **Աւագեան Ք., Ռ.,** Սերնդափոխութեան հեռանկարները Սփիւռքում, http://lraber.asj-oa.am/6437/1/124.pdf , էջ 124։

[24] Տե՛ս նոյն տեղում։

[25] Տե՛ս նոյն տեղում։

[26] Տե՛ս **Աղաբեկեան Ա. Ա.,** Յարութիւնեան Ա. Կ., Պատժի դերակատարութիւնը յանցագործի ուղղման գործընթացում, Տեսական եւ կիրառական հոգեբանութեան արդի հիմնախնդիրները, 5-րդ միջազգային գիտաժողով, հոկտեմբերի 23 - 25, Երեւան 2015, էջ 7։

բարձր է Ռուսաստանի Դաշնութիւնում, Եւրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լատինական Ամերիկայի երկրներում։ Պայմանաւորուած կրօնական, քաղաքական, լեզուային եւ այլ գործօններով՝ խառնամուսնութիւններ գրեթէ տեղի չեն ունենում Արեւելքի երկրներում։ Խառնամուսնութիւններից խուսափելու համար Հայաստանի Հանրապետութիւնը եւ սփիւռքեան կառոյցները ինտենսիւ աշխատանքներ են կատարում՝ փորձելով ներգրաւել սփիւռքի երիտասարդներին համահայկական ձեռնարկների մէջ։ Սակայն փորձը ցոյց է տալիս, որ այս ամէնով հանդերձ, հնարաւոր չէ խուսափել խառնամուսնութիւններից։

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Լաւ է ընելը քան թէ ցանկալը։

Ամէն մարդ կը կարծէ թէ իր սագը կարապ է։

Դաշոյնի վէրքը կը բուժուի, սակայն խօսքի վէրքը երբեք։

Եղէգը կը տոկայ հովերուն, մինչ հսկայական կաղնիներ կը տապալին։

Բարեկամին յարգը չենք գիտնար, մինչեւ զինք կորսնցնելը։

Հնազանդիլ գիտցի՛ր, որպէսզի օր մը ալ ուրիշներ քեզի հնազանդին։

Հզօր է այն անձը, որ գիտէ իր տկարութիւնը։

Ոչ ոքի չհաւնողը աւելի դժբախտ է, քան ան՝ որուն ոչ ոք կը հաւնի։

Երեք տեսակ տգիտութիւն կայ.

ա. Անգիտանալ ա՛յն ինչ որ պէտք է գիտնալ։

բ. Գիտցածը լաւ չգիտնալ, եւ

գ. Պէտք չեղածը գիտնալ։

Զգուշացի՛ր այն աչքերէն, որոնք սխալներ տեսնելու համար բաց են, սակայն լաւը տեսնելու՝ գոց։